գուով, այլ և ընդհանուր դաղափարներով, բարքով և ծառայութիւններով է լինում, այսինքն հոգեւոր, ընկերական և տնտեսական ընդհանուր շահերով։

Վերջապէս եթէ հեղինակը մասաւոր և դրականական կապերը բարձր է դասում, քան ազգային և արենակցական կապերը, ես իմ կողմից բոլորովին համաձայն եմ նորա հետ, բայց եթէ դարանով ուզում է ասել, թէ մենք պէտք է հրաժարուենք մեր ազգային և արենակցական կապերից, այն ժամանակ նա մոռանում է, որ մենք հասարակ մարդիկ ենք, և մեզ բնութիւնը չէ տուել ոչ իշխանութիւն, ոչ այժ՝ այդպիսի կապերը քակտելու համար։ Մենք եւս չուզեցանք խնդիրը վճռել. այլ առաջարկում ենք լոկ միայն մեր խորհրդածութիւնները։

Ս. Մանդինեան։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Զատկական Տօներու առթիւ Սիոնի հրատարակութիւնն սակաւ ինչ ուշացաւ. ուստի և ժամանակագրական մասին մէջ խառն են Մարտի վերջին և Ապրիլի առաջին օրերու դէպքերն։

—Մեծ. Յակոբ էֆ. Աշըդեան, որ անմահ յիշատակներ ունի Ս. Աթոռոյս մէջ, և Մեծ. Սենեքերիմ էֆ. Մանուկեան, որ նշանաւոր է Պոլսոյ մէջ Ազգին մատուցած իւր ծառայութեամբ, կը գտնուին այժմ 'ի Ս. Երուսաղէմ իւրեանց բարեպաշտ ընտանեօք հանդերձ և մտադիր են սակաւ ժամանակէն զինի Աղէքսանդրիա երթալ։ Երուսաղէմ զանազան Ազգութեանց մրցման տեղի լինելով՝ սոյնպիսի նշանաւոր Ազգայնոց ուխտաւորական այցելութիւնն 'ի Ս. Երուսաղէմ փառք և պարծանք է մեր Ազգին համար առաջի օտարաց։

—Սանտալճեան Գեր. Ստեփան Արքեպիսկոպոսն ժամանեց 'ի Ս. Աթոռս եւ ընդունուեցաւ ինչպէս պարտ եւ արժան էր։

—Զատկական Տօներն կատարուեցան ամենայն խաղաղութեամբ և Ուխտաւորք Աղգայ սկսան վերադառնալ։ Ներկայ տարւոյս մէջ Եւրոպայի այցելուք եւ Ռուս Ուխտաւորք խիստ բազմաթիւ են։ Եւրոպացիք գրեթէ անընդհատ կ'երթեւեկեն և ճանապարհի ամեն պատրաստութիւն ունենալով Պաղեստինի ամեն նշանաւոր տեղերն կը հարցասիրեն, սակաւ ժամանակի մէջ աւելի շատ բանի կը տեղեկանան, քան թէ Ասիացիք իրենց երկարաժամանակեայ կեցութեամբ յԵրուսաղէմ։

—Յունաց Ս. Պատրիարքն մտադրութիւն ունի պատրիարքական գործքերն Տեղապահի և Սինոդին յանձնել և ինքն 'ի Պոլիս երթալով և տեղւոյն Պատրիարքի ու Ժողովի միջոցաւ կարեւոր պատրաստութիւններն աւանելով այցելութեան ելնել 'ի Բուլղարիստան, 'ի Մոլտո — Վլաքիա և անտի, եթէ հնար իցէ, 'ի Ռուսաստան։

Սոյն այցելութեան գլխաւոր նպատակն է ոչ միայն դրամական նպաստ ժողովել, այլ և յիշեալ տեղեաց երուսաղէմապատկան կալուածներն, որոնք բարձուած են Բուլղարական խնդրոյն առթիւ, վերստին Երուսաղէմի Յունաց Վանուց դարձնել։ Կը լսուի թէ այս մասին տեղական իշխաններէն արդէն գրաւոր խոստումներ եղած են Ս. Պատրիարքին, որ անպատճառ կը յաջողի, եթէ այցելութեան ելնէ այն երկիրներն, ուր երկար ժամանակ ինքն առաջնորդական պաշտօն վարած է և ծանօթ է ժողովրդեան։

digitised by A.R.A.R.@